


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Փետրվարի 4-ին, կիրակի.—Բարեկենդան Առաջաւորաց պահոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլեչյանը:

Հավարտ պատարագի կատարվեց նորոգ անգուցյալ Երուսաղեմի Հայոց Պատրիարք երջանկահիշատակ Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանի հոգեհանգստյան արարողությունը:

Այս առթիվ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Փետրվարի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի Տաճարն:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Չուլջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Փետրվարի 18-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Փետրվարի 21-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*

* *

**Փետրվարի 22-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար**

**երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Փետրվարի 25-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի դամբանական խոսքը՝ Տ. Եղիշե Պատրիարք Տերտերյանի մահվան առթիվ:

*

* *

**Մարտի 4-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքըյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

**Մարտի 7-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*

* *

**Մարտի 11-ին, կիրակի.—Անառակի կիրակի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք նորոգ հանգուցյալ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի մահվան առթիվ սրտահույզ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

*

* *

**Մարտի 14-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*

* *

**Մարտի 18-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Կանադայի հայոց թեմից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գարեգին քհն. Կարապետյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* *

*

**Մարտի 25-ին կիրակի.—Դատավորի կիրակի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: